ՃԼԴ.

Չէ նշանակուած նամակիս մէջ փաշային անունը՝ որոյ մասին շահեկան տեղեկութիւններ կը տրուին. և կ'ենթադրուի անշուշտ նամակիս ընթացքէն՝ որ այստեղ այլազգի փաշայ մը չէ ան, այլ քրիստոնեայ նահանգապետ մը կամ կուսակալ մը։

Գերապայծառ և գերայարգ Տեառն իմոյ
և Աբրահոմ Ստեփանոս Վարդապետի

... հարկ եղև ինձ յայց առնել փաշայի երկրիս. և սիրով ընկալաւ և էհարց բազում ինչ, լատիներէն և ուլահերէն. և ես ըստ կարեաց իմոց մեծաւ խոնարհութեամբ ետու պատասխանի. և ասաց թէ ինքն ևս պաշտպան լինելոց[է]կրօնին մերոյ։ Սէգրէդարն փաշային ասաց ինձ առանձին թէ փաշայն ևս կամի լինիլ եղբայր կրօնին մերոյ. որպէս և է եղբայր յիսուսեան կարգին, և ֆրանչիսկանաց. ուստի ծանուցանեմ գերյարգութեանդ, թէ որպէս կամի գերյարգութիւնդ, և յայնժամ ես յղեմ փոստով զկերպն գրելոյ եղբայր լատիներէն յիսուսեան կարգին, նաև զանուան գրութիւն փաշային. փաշայն բերանով իւրով խնդրեաց յինէն բերել ի վենետիքու պրէվիարիում կարգին ֆրանչիսկանաց, չորս հատոր խոշոր գրով, սև կողով ոսկեջրած հանդերձ նոր սրբովք ունկարիայոյ և դրանսիլֆանիոյ. Աղաչայ Պիրոմն ասաց թէ քաղաքն վճարէ զգինն. միայն խնդրեմ հոգալ, քանզի միանգամ ևս եբեր Աղաչայ մարտիրոսն, բայց մանր գրով էր և ոչ ունէր զգեղեցիկ տիպ։ Բայց սոյնս եղիցի հաստագոյն թղթով և խոշոր գրով։ Նմանապէս երկրորդ խորհրդականն փաշային խնդրեաց բերել ի վենետիքու զպատկերսն աստուածաշնչի հին և նոր կտա[կա]րանի չարջէֆէով ոսկի թօփուզով. ի ներքոյ իւրաքանչիւր պատկերացն վկայութիւն աստուածաշնչին լատիներէն գրած։ Զգինն այսորիկ ևս քաղաքն վճարէ, այսինքն Աղաչայ պիրոմն։ Աղաչայ պիրոմն ևս խնդրեաց ինքեան բերել հայերէն գրած պատկերքն Աստուածաշնչին չէրջիվէով։...

Ցամի տեառն 1754
յունիսի 1
[Հայաքաղաք]

Նուաստագոյն ծառայ
Հ. Ղազարոս կրօնաւոր

ՃԼԵ.

Սարաֆեանի ուրիշ մէկ նամակն ահա. կը գրէ այս անգամ Զմիւռնիայէն, ուսկից յետոյ Պոլիս պիտի անցնէր։ Թղթին սկիզբը երկու տեղ քով քովի մաշած ըլլալով՝ կէտէր դրինք։ Հետևելով իր վարուց պատմութեան ու նկատելով մաշած տեղերու մնացորդ տառերը՝ կ'եզրակացնենք, որ յիշեալ Առաջնորդն է Սահակ Ահագին, որ դեռ այն ատեն իր բարեկամն էր, զոր և ինքը կ'ակնարկէ անշուշտ [եղ]բայր անուամբ։

Համբաւաւոր քարոզիչ մ'ըլլալով Սարգիս արք. Սարաֆեան՝ սոյն քաղաքին մէջն ալ ցոյց կու տայ իր մեծ յատկութիւնը։

Նամակիս մէջ հոն կատարած իր առաքելութեան վրայ կը խօսի, ինչ որ կը յաւելու մանրամասնութիւն մը իր կենսագրականին վրայ։

Տեառն Տեառն Ստեփանոսի Սրբակրօն Աբբայ՝ մտերիմ և սեր[տ] սիրով
ի Քրիստոս Յիսուս Աղչոյն ընծայեմ

Նաւարկեալ ի լիկօռնայու ժամանեցաք Տերամբ յ30 օրն ի Քաղաքս զմիւռին, և աստ գտեալ զվ[...]կ[..]պե[..] բայր մեր [..]ալ վերստին Առաջնորդ, ընկալեալ եղաք ի սմանէ ի վեր քան զոր վարկէաքն ողջամբ, և ի բնաւից տեղացւոց յոյժ մարդա-